Հատորը նվիրվում է
ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի
Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
40-ամյակին

Մեր կյանքի այսօրվա դժվարին, շա՜տ դժվարին պայմաններում ամեն մի գիտական գործի հրատարակությունն ինձ մեծապես ուրախացնում է:

Առավել ևս, երբ դա վերաբերում է հայագիտությանը:

Եվս առավել, երբ դա աշխատությունների ժողովածու է, ուր կարող են ընդգրկվել շատ ու հատկապես երիտասարդ հեղինակներ:

Եվս առավել, երբ դրանք նվիրված են Շիրակի դաշտի մշակույթի շքեղ անցյալին:

Եվ, վերջապես, առավել ևս, երբ այդ ժողովածուն լույս է տեսնում իմ սիրելի Գյումրիում, որ այնքան կարոտ է գիտական և մշակութային կյանքի ու մտքի հարստացման:

Գյումրիի հայագիտական կենտրոնի տարեց ու երիտասարդ գիտական աշխատակիցներին նոր հաջողությունների բարեմաղթությամբ՝

ԳԱԱ Արվեստի ինստիտուտի տնօրեն,
ակադեմիկոս Լ.Հախվերդյան

Անչափ ուրախ եմ, որ Գյումրիում տպագրվում է մի գիտական ամսագիր, որը իր հարուստ բովանդակությամբ ու պատշաճ ձևավորմամբ իրավամբ կարող է պատիվ բերել մայրաքաղաքային ցանկացած գիտահետազոտական օջախի: Շիրակի հայագիտական նորաստեղծ կենտրոնի համար սա հսկայական հաջողություն է:

Հուսով եմ, որ հաջորդ հատորները չեն ուշանա և նոր խոսք կլինեն Շիրակի հայագիտական մտքի առաջընթացի ճանապարհին:

ԳԱԱ Լեզվի ինստիտուտի տնօրեն,
ակադեմիկոս Գ.Ջահուկյան

Շնորհավորում եմ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնին՝ գիտական ժողովածուի առաջին հատորի լույս ընծայման առիթով: Այս դժվարին պայմաններում դա գիտական սխրանք է՝ ի նպաստ հայագիտության զարգացման:

ԳԱԱ ՀԱԻ տնօրեն,
պատմագիտության դոկտոր Ա. Քալանթարյան

Ողջունում եմ Շիրակի Հայագիտական կենտրոնի «Գիտական աշխատությունների» առաջին հատորի հրատարակությունը, որում տեղ են գտել Շիրակի երիտասարդ հայագետների, ԳԱԱ հնագիտության և ազգագրության, արվեստի ինստիտուտների, Գյումրու մանկավարժականի աշխատակիցների վերջին տարիների լավագույն հոդվածներից:

Ժողովածուն փայլուն վկայությունն է այն բանի, որ Շիրակի Հայագիտական կենտրոնը մեծ հաջողությունների է հասել: Որոշ հրապարակումներ հայագիտության բնագավառում բոլորովին նոր խոսք են:

Ցանկանում եմ տեսնել հաջորդ հատորները ևս:

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Գ. Ղարիբջանյան

Սրտանց ողջունում և շնորհավորում եմ Շիրակի Հայագիտական կենտրոնի գիտական պարբերականի անդրանիկ հատորի հրաշալի ծնունդը:

Համոզված եմ՝ այն կդառնա Շիրակի Հայագիտական նորաբողբոջ մտքի կազմակերպիչը և նրա հասուն մակարդակի արտացոլման ճշմարիտ հայելին:

ԳԱԱ ՀԱԻ փոխտնօրեն,
բանասիրության դոկտոր Ս. Հարությունյան